

## **ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՏԵՂ ԲՈԼՈՐ ՉԱՓԱՀԱՄՆԵՐԸ ՏԱՐԵՑ ԿԱՍ ՀԱՇՄԱՆԴԱՍ ԱՆՁԻՆՔ ԵՆ ԵՎ ՉՈՒՆԵՆ ՎԱՍՏԱԿԱԾ ԵԿԱՍՈՒՏ:**

Դուք ստանում եք այս ծանուցագիրը, որովհետև Ձեր CalFresh ընտանիքի բոլոր չափահաս անդամները տարեց են կամ ստանում են հաշմանդամության նպաստներ (հաշմանդամ են):

### Վերավկայագրում նպաստների համար.

Երբ Դուք դիմում եք CalFresh նպաստների համար, մենք «վկայագրում ենք» Ձեր իրավունակությունը որոշ ժամանակաշրջանի համար: Նախքան Ձեր վկայականի ժամկետի ավարտն անհրաժեշտ կլինի «վերավկայագրվել», որպեսզի շարունակեք նպաստներ ստանալ:

Որպեսզի Ձեզ համար դյուրին դարձնենք նպաստների ստացման շարունակականությունը, մենք հարցազրույց չենք պահանջում այն ընտանիքի համար, որտեղ բոլոր չափահաս անձինք տարեց կամ հաշմանդամ են և չունեն վաստակած եկամուտ (սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտը (SSI) և սոցիալական ապահովագրությունը չվաստակած եկամուտներ են): Ձեր ընտանիքից չի պահանջվում հարցազրույց անցնել, եթե ինքներդ չեք ցանկանում, կամ եթե վարչական շրջանի Սոցիալական ապահովության վարչությունը (County Welfare Department, CWD) չի որոշում, որ հարցազրույցն անհրաժեշտ է: Դուք կարող եք վկայագրվել մինչև 24 ամիս ժամկետով, եթե Ձեր ընտանիքը համապատասխանում է իրավունակության բոլոր մյուս պայմաններին:

### Վերավկայագրման քայլերը.

- Խնդրում ենք կարդալ «Ծանուցում վկայականի ժամկետի ավարտման մասին» ծանուցագիրը, երբ այն ստանաք:
- Դիմեք CWD-ին, եթե ցանկանում եք հարցազրույց անցնել: Սովորաբար, հարցազրույցներն անցկացվում են հեռախոսով, եթե չեք գերադասում առերես հարցազրույց, իսկ եթե հաշմանդամության պատճառով կարիք ունեք այլ պայմանավորվածությունների, անմիջապես զանգահարեք CWD գրասենյակ:
- Ամբողջովին լրացրեք դիմումը, ստորագրեք և թվագրեք այն: Անպատասխան թողնված հարցերը կարող են պարտադիր դարձնել հարցազրույցի անցկացումը:
- Կարող եք դիմումը CWD-ին ուղարկել էլեկտրոնային փոստով, հեռապատճենով կամ հանձնել անձամբ (ներկայացնելով Ձեր վերջին զեկույցից հետո տեղի ունեցած փոփոխությունները հաստատող փաստաթղթեր), որպեսզի հաստատող փաստաթղթերով դիմումը վարչական շրջանին հասնի **մինչև վկայագրման ժամանակաշրջանի վերջին ամսվա առաջին օրը**: Կարևոր է վարչական շրջանին ժամանակ տալ Ձեր դիմումը մշակելու համար, նախքան վկայականի գործողությունը կդադարեցվի:
- Իսկույն զանգահարեք վարչական շրջանի գրասենյակ, եթե հաստատող փաստաթղթերը ձեռք բերելու համար օգնության կարիք ունենաք:
- Եթե որևէ փոփոխություն եք ունեցել Ձեր վերջին զեկույցից հետո, խնդրում ենք հաստատող փաստաթղթի կամ ապացույցի պատճենները հաստատման կամ մերժման ծանուցագրի հետ միասին ուղարկել վարչական շրջանին, օրինակ
  - բժշկական ծախսեր. բժշկական ծախսերի անդորրագրեր, ինչպիսիք են դեղատոմսով տրվող դեղերի, ակնոցների, շաքարախտի բուժման պարագաների, դեպի բժշկի կարիներտ կամ հիվանդանոց և այնտեղից վերադարձի տրանսպորտային ծախսերի անդորրագրեր կամ ապացույց, որ ինչ-որ մեկը խնամում է հաշմանդամ անձին և այլն.
  - Չվաստակած եկամուտ. առավել վերջին շնորհման նամակը կամ չվաստակած եկամտի ուղղակի վճարման քաղվածքը (օրինակ՝ SSI և սոցիալական ապահովության վճար), ներառյալ տոկոսային եկամտի գումարները և վճարումների հաճախականությունը.
  - Բնակարանային ծախսեր. վարձակալական վճարի ստացական, բնակվարձի վճարման անդորրագիր կամ բնակապահովման պաշտոնական տեղեկանք լրիվ հասցեով և կոմունալ ծառայությունների ծախսերով.
  - Երեխայի կամ չափահաս անձի խնամք. անդորրագրեր կամ ներկայացված հաշվի քաղվածքներ, որոնք ցույց են տալիս, որ Դուք վճարել եք կամ հաշիվ եք ստացել երեխայի կամ չափահաս անձի խնամքի համար.
  - Ընտանիքի նոր անդամ, ով դիմում է նպաստներ ստանալու համար. եթե ինչ-որ մեկը տեղափոխվում է ընտանիք և ցանկանում է դիմել նպաստների համար, խնդրում ենք ուղարկել ներգաղթային կարգավիճակը, եկամուտը, ծախսերը հաստատող փաստաթղթեր, սոցիալական ապահովության քարտի համարը և այլն: